«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման ՝ *Ուսուցիչների համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ կրթության կազմակերպման և դաստիարակության հարցերում:*

Առարկան ՝ *Քիմիա*

Հետազոտող ուսուցիչ ՝ *Գյուլվարդ Աբգարյան*

Ուսումնական հաստատություն ՝ *Բաղրամյանի միջնակարգ դպրոց*

Երևան 2023

Հետազոտական աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն	
Հետազոտությունն իրականացնող ուսուցչի տվյալներ	
Անուն, ազգանուն	Գյուլվարդ Աբգարյան
Աշխատավայրը(դպրոցի լրիվ անվանումը)	Բաղրամյանի միջնակարգ դպրոց
Մասնագիտություն	Ուսուցչուհի
Հեռախոսահամար	093-16-06-91
Էլ. հասցե	vardabgaryan1991@gmail.com
Դասավանդվող առարկա (առարկաներ)	Քիմիա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ . 5

1.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ 6

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 7

2.1 Երեխաների տարիքային առանձնահատկությունները և դրանց հաշվառումը ուսուցչի և ծնողների կողմից կրթության և դաստիարակության ընթացքում 7

2.2 Ուսուցչի համագործակցությունը սովորողի ծնողի հետ՝ որպես սովորողի առաջադիմության ու զարգացման անհրաժեշտ պայման: 10

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 13

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 14

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Երեխայի մասին արդարացի և ճիշտ դատելու համար չպետք է նրան իր ոլորտից տեղափոխել մերը, այլ ինքներս պետք է վերաբնակվենք նրա հոգևոր աշխարհում»:

Ն. Պիրոգով

Մեր օրերում երեխաներ մեծացնելն ավելի բարդ է, քան երբևէ եղել է: Ավելի ու ավելի է բարդանում իրավիճակը, երբ կիրառում են կրթության կազմակերպման և դաստիարակության «հնացած» մեթոդներ:

Նախկինում երեխաների դաստիարակության գործում առաջնությունը տրվում էր ուսուցիչներին՝ անտեսելով սովորողի ընտանեկան կրթական միջավայրի առաձնահատկությունները: Այժմ, երբ երեխայի հետ փոխգործակցության օպտիմալ մոդելը ուղղված է անձին ու նրա համակողմանի զարգացմանը, ուսումնական հաստատություններում կրթական ծրագրերը պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով սովորողի անհատականությունը: Իսկ ինչպես հայտնի է՝ անհատականությունը ձևավորվում է ընտանիքում, քանի որ երեխան իր ժամանակի մեծ մասն անցկացնում է ընտանիքում, և նրա զարգացման վրա մեծ ազդեցություն ունի ընտանեկան միջավայրը: Շատ հաճախ կարելի է լսել այն կարծիքը, որ ամեն ինչ ընտանիքից է գալիս: Սա մասամբ այդպես է: Հիմնական բնավորության գծերը կամ գենետիկորեն են փոխանցվում, կամ ձևավորվում են ծնողների ազդեցության արդյունքում՝ մանկության տարիներին: Սակայն դա չի փոքրացնում դպրոցի դերը անհատի ձևավորման և դաստիարակության գործում: Հետևաբար պետք է իրականացնել համագործակցություն ուսուցչի, սովորողի ընտանիքի հետ: Ժամանակի հետ այդ համագործակցությունը դառնում է ավելի արդիական և պահանջված: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունն իրենից ներկայացնում է նպատակաուղղված և երկարատև աշխատանք, որն էլ իր հերթին ենթադրում է գործողությունների մի ամբողջական համակարգ՝ ուղղված սովորողի կրթական կարիքների ու

պահանջմունքների վերլուծությանն ու բարելավմանը: Ուսուցչի և սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի միջև համագործակցությունը պետք է իրականացվի՝ պահպանելով էթիկայի նորմերը:

1.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Տվյալ հետազոտության արդիականության հիմք է հանդիսացել կյանքի՝ մարտահրավերներով լի ժամանակահատվածում սովորողի կրթական կարիքների ապահովման շրջանակներում ծնող-ուսուցիչ հաստատուն կապի անհրաժեշտությունը, որը կարող է մեծ ազդեցություն ունենալ սովորողի ուսումնադաստիարակչական գործընթացի որակի բարձրացման վրա:

Երբ ծնողը արդյունավետ ներգրավվածություն ունի զավակի կրթության գործընթացում, աշակերտն ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն է գրանցում և ավելի արժևորված է զգում իրեն:

Դասարաններում աշակերտների մեծ քանակով պայմանավորված և հետևաբար ժամանակի սղության պատճառով հնարավոր չի լինում անհրաժեշտ ուշադրություն դարձնել, բավարար ժամանակ տրամադրել յուրաքանչյուր աշակերտի գիտելիքների լիարժեք ստուգմանը՝ անկախ նրա առաջադիմությունից, ակտիվությունից և այլնից:

Այս պարագայում առաջնային է դառնում ուսուցիչ-ծնող փոխհամագործակցությունը՝ միասնական ուժերով բացասական տարաբնույթ երևույթները արմատախիլ անելու և գոնե դրական անհրաժեշտ նվազագույնը սերմանելու նպատակով:

1.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Սերտ համագործակցություն ապահովել դպրոցի և սովորողի ծնողի միջև:
- Հնարավորինս ներգրավել ծնողներին զավակների ուսումնադաստիարակչական գործընթացում դպրոցի կազմակերպած դասարանական և արտադասարանական միջոցառումներին:
- Նպաստավոր պայմաններ ստեղծել աշակերտների սոցիալական զարգացման, դաստիարակության և կրթության համար:
- Ցույց տալ ուսման և դաստիարակության ընթացքում ուսուցչի և ծնողների կողմից երեխաների տարիքային առանձնահատկությունների հաշվառման կարևորությունը:
- Ներկայացնել ծնող-ուսուցիչ արդյունավետ համագործակցության դրական ազդեցությունը սովորողի ուսումնադաստիարակչական գործընթացում:

Հետազոտության խնդիրը՝

- Ինչպե՞ս ներգրավել ծնողներին աշակերտների ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման պրոցեսին:
- Ինչպե՞ս ներգրավել ծնողներին իրենց երեխաների ուսմանը և դաստիարակությանը վերաբերող հարցերի մասին ընդհանուր որոշումներ կայացնելու գործին:

Հետազոտության <u>վարկած</u> և <u>հարցեր</u>

Մենք ենթադրում ենք, որ միայն դպրոց-ընտանիք սերտ կապի և համագործակցության շնորհիվ կարելի է հասնել ուսումնադաստիարակչական գործընթացում առաջ քաշած նպատակներին:

Ի՞նչ չափով է ծնողների ներգրավվածությունն ազդում աշակերտների առաջադիմության վրա:

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1 Երեխաների տարիքային առանձնահատկությունները և դրանց հաշվառումը ուսուցչի և ծնողների կողմից կրթության և դաստիարակության ընթացքում

Տարիքային մանկավարժությունը մանկավարժական գիտության կարևոր ճյուղերից մեկն է և ուսումնասիրում է դաստիարակության և ուսուցման առանձնահատկությունները, երեխաների դինամիկ զարգացման մի փուլից հաջորդին անցնելու օրինաչափությունները;

Օրգանիզմի յուրաքանչյուր ֆունկցիա ունի իր բուռն զարգացման որոշակի փուլեր, որը ճգնաժամային է կոչվում, քանի որ այդ ժամանակաշրջանում է որոշվում այդ ֆունկցիայի հետագա ճակատագիրը:

Օրինակ գայլերի ոհմակում մեծացած երեխաներն այլևս խոսել չեն կարողանում, քանի որ վաղ հասակում չեն լսել մարդկային ձայն:

Այսպիսի օրինաչափությունը պահանջում է սպառիչ իմացություն ամեն մի ժամանակաշրջանի հնարավորությունների և դրանք իրականության վերածելու ուղիների մասին:

Այստեղ փաստորեն խոսքը սենսիտիվ տարիքի մասին է (լատ. sensitives- զգայուն), այսինքն մարդու օնտոգենիկ զարգացման այն շրջանի մասին է, երբ արտաքին որոշ ներգործությունների նկատմամբ երեխան դրսևորում է արտակարգ զգայունակություն, որի շնորհիվ լավագույն ներքին պայմաններ են ստեղծվում հիշողության, մտածողության և հոգեկան այլ պարագաների զարգացման համար:

Գերզգայուն փուլում ուսուցումը և ընդհանրապես դաստիարակությունը առավել արդյունավետ են ընթանում (Ա. Նալչաջյան):

Այժմ ներկայացնենք մի քանի տվյալներ յուրաքանչյուր տարիքային շրջանի մասին:

Կրտսեր դպրոցական (6-10 տարեկան)

Վեց տարեկան հասակում երեխային սպասվում է կյանքի առաջին մեծ փոփոխությունը: Դպրոցական տարիքին անցումի կապված է մեծ փոփոխությունների

հետ նրա գործունեության, շփման, այլ մարդկանց հետ հարաբերություններ ունենալու ընթացքում:

Առաջատար գործունեությունը դառնում է ուսումը, փոխվում է կյանքի դրվածքը, առաջ են գալիս նոր պարտականություններ, փոխվում է նաև երեխայի և նրան շրջապատող մարդկանց փոխահարաբերությունները:

Միջին դպրոցական ((10-11)-15 տարեկան)

Արդեն փոքր չէ, սակայն դեռ մեծ էլ չէ; Ամենամեծ տհաճությունը, որ ապրում են երեխաների այս տարիքում, ծնվում է ավագների ներկայացրած պահանջների երկու ստանդարտից: Երբ մեծերին պետք է, ասում են՝ դեռ փոքր ես, չի կարելի: մեկ ուրիշ անհրաժեշտության դեպքում էլ ասում են՝ արդեն մեծ ես, պետք է հասկանաս:

Կարևորվում է նրա ֆիզիկական զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը՝ ապահովելով առավոտյան մարմնամարզական շարժումները, շարժական խաղեր, մաքուր օդում շատ մնալը:

Այս տարիքի համար ամենահատկանշականը սեռական հասունացումն է, որը լուրջ փոփոխություններ է կատարում օգրանիզմի կենսագործունեության մեջ, առաջացնում է նոր ապրումներ, սկսում ձևավորել փոխահարաբերությունների նոր ոճ երկու սեռերի միջև:

Կարևոր փոփոխություններ են կատարվում նրա հոգեկան աշխարհում: Այս հասակը հաճախ բնութագրվում է որպես բարոյական ճգնաժամերի շրջան: Դեռահասը դառնում է համառ, ինքնամփոփ, հաճախ է զայրույթի պահեր ունենում, կոնֆլիկտների մեջ մտնում, եթե հաշվի չեն առնում նրա տարիքային առնաձնահատկությունները, չեն հարգում նրա արդեն որոշակի որակի հասած ինքնասիրությունն ու արժանապատվության զգացումը:

Նրանք հաճախ են իրենց կուռք ընտրում ոչ այնքան էլ բարոյապես աչքի ընկնող, սակայն ուժեղ և համարձակ մարդկանց: Այնքան էլ հազվագյուտ չէ, որ նրանց շրջանում մեծ հարգանք են վայելում «գողական տղաները» ու խոսելու «գողական» ոճը:

Դասերի նկատմամբ ցուցաբերում է ընտրովի վերաբերմունք: Հետաքրքիր դասերը և հետաքքրքիր գործերը գրավում են նրան:

Ավագ դպրոցական: (15-18 տարեկան)

Ավատրվում է ֆիզիկական աճը: Ավարտվում է նաև սեռական հասունացման հիմնական շրջանը, և ապահովվում է ողջ օգրանիզմի ընդհանուր հասունացումը:

Դասերին նպատակահարույց ուսուցման բացակայությունը և աշակերտներին մտավոր աշխատանքով զբաղվելու շահագրգռելու անհրաժեշտության անտեսումը հանգեցնում է շատ առարկաների նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը:

Այս տարիքում հատկապես ուժեղանում է ուսման մեջ անձամբ իր համար իմաստ որոնելու ձգտումը, որը միաժամանակ դրական երևույթ է: Եթե աշակերտը չի գտնում այդպիսի իմաստ, ապա հրաժարվում է ուսումից կամ առանձին առարկաներ սովորելուց: Իսկ դրա մանկավարժական պատճառները գտնվում են կրթության բովանդակության և ուսուցման մեթոդների մեջ:

Այս տարիքում ճիշտ դաստիարակության շնորհիվ մեծանում է ռեֆլեքսիայի դերը ավագ դպրոցականի բարոյական կերպարի ձևավորման գործում: Նա դառնում է ավելի պահանջկոտ իր նկատմամբ ևս. լրջորեն է զբաղվում ինքնադաստիարակությամբ:

Այդ ամենը լուրջ խնդիրներ են ներկայացնում ընտանիքին և դպրոցին:

2.2 Ուսուցչի համագործակցությունը սովորողի ծնողի հետ՝ որպես սովորողի առաջադիմության ու զարգացման անհրաժեշտ պայման

Դպրոցի, ընտանիքի և արտադպրոցական դաստիարակչական հիմնարկների համագործակցությունը պայմանավորված է մանկավարժական անհրաժեշտությամբ:

Դպրոցի, ընտանիքի և արտադպրոցական դաստիարակչական հաստատությունների դպրոցականների դաստիարակության և կրթության ֆունկցիաներ իրականացնող ինքնուրույն պետական և հասարակական ինստիտուտներ են: Դրանք երեխաների դաստիարակության հարցում ունեն յուրահատուկ ֆունկցիաներ, իրավունքներ և պատասխանատվություն, որոնք կարգավորվում են օրենքով և կրթության համակարգի ղեկավար մարմինների որոշումներով, մեթոդական մանկավարժական ցուցումներով և հանձնարարականներով:

Մանկավարժական ամբողջական գործընթացի ներքին տրամաբանությունը պահանջում է երեխաների դաստիարակությունն իրականացնող բոլոր սուբյեկտների սերտ կապ, միասնական, համաձայնեցված գործունեություն:

Ինչ վերաբերվում է ընտանիքին, ապա այն, որպես կրթական կոլեկտիվ, ունի մի շարք առանձնահատկություններ: Առաջին հերթին այն կոլեկտիվ է՝ միավորված ոչ միայն ընդհանուր նպատակով, այլև ազգակցական կապերով: Ծնողական զգացմունքները, ծնողական սերը մի տեսակ կատալիզատոր են, որն արագացնում է անձի զարգացումը: Սա համեմատաբար կայուն թիմ է, որտեղ շփումը տեղի է ունենում անընդհատ, հնարավոր ամենալայն տարածքներում, տարբեր գործունեություններում:

Ընտանիքում է դրվում և ապահովվում անհատականության կարևորագույն գծերի դաստիարակությունը: Դրանում սովորողը ստանում է աշխարհի մասին առաջին պատկերացումները, այստեղ ձևավորվում է հասկացություններ, հայացքների, զգացմունքները, սովորությունների ֆոնդը, որն ընկած է անհատի բարոյական ձևավորման հիմքում: Միայն ընտանիքում է հնարավոր ստեղծել և

վերարտադրել իսկապես ազգակցական հարաբերությունների մշակույթ, տիրապետել սոցիալական կարևորագույն դերերին, ձևավորել մշակույթ, հարստացնել բարոյական փորձը:

Ծնողների հետ փոխգործակցությունը դպրոցի և յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում հրատապ և բարդ խնդիրներից է:

Ընտանիքները շատ տարբեր են, յուրաքանչյուրն ունի իր խնդիրներն ու դժվարություններն, ուստի հնարավոր չէ պատրաստի և միակ ճիշտ պատասխանը տալ այն հարցին,թ ե ինչպես շփվել ընտանքիի հետ: /Վ. Դ. Սեմյոնով/

Շատ բան կախված է ուսուցչի հմտությունից, ինտուիցիայից, ով պետք է վերլուծի տարբեր հանգամանքների համալիրը, որեպսզի ճիշտ որոշում կայացնի որոշակի իրավիճակում ծնողների և սովորողի հետ շփվելու մեթոդների և միջոցների ընտրության հարցում:

Ծնող-ուսուցիչ, կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, իսկ ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը, ինչպես նաև դպրոցի ու ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանը:

Այսպիսով ծնողների և ընտանիքների ներգրավումը ապահովելու համար ուսուցիչը պետք է՝

- Դիտի ծնողներին որպես գործընկերներ

- Կանոնավոր կերպով հաղորդակցվի նրանց հետ
- Ներգրավի ծրագրերի մասնակցությանը
- Նպաստի տնային պայմաններում ուսման զարգացմանը
- Աջակցի ընտանիքներին ռեսուրսներից և ծառայություններից օգտվելու հարցում: /«Քայլ առ քայլ»-ի չափորոշիչների կիրառումը դասարաններում/:

Արդյունքում սովորողը միշտ կլինի ուշադրության կենտրոնում, կլինի կառավարելի:

«Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը, ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր առաջադիմություն, այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, սովորողի մոտ զարգանում է սոցիալական շատ կարևոր հմտություններ և նրա վարքը դական է դառնում, ինչպես տանը, այնպես էլ դպրոցում:

http://kargishkola.ge/parent/pdf/peguide Armenian PDF

Ծնող-դպրոց կապը ավելի կամրապնդվի, եթե հաճախակի հրավիրվեն ծնողական ժողովներ, հանդիպումներ, խորհրդատվություններ, տարբեր հետաքրքրաշարժ միջոցառումներ: Այդ կապը ևս ավելի կզարգացնենք, եթե օգտագործենք ժամանակակից տեխնոլոգիաներ: Ժամանակակից տեխնոլոգիաները /համակարգիչ, հեռախոս/ հնարավոր են դարձնում քննարկումները կատարել հեռավար: Տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս երեխայի կրթական կարիքների և ուսման առաջադիմության կամ կարգապահական խնդիրների մասին տեղեկանալ ավելի շուտ:

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիտարկումներն ու ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տարրական դասարաններում ծնողներն ավելի են ներգրավված ուսումնական գործընթացին, հաճախակի ինքնակամ այցելում են դպրոց, դպրոց-ծնող -ուսուցիչ կապն ավելի ամրապնդված է, քան միջին և բարձր դպրոցներում:

Հետևաբար, լինելով 8-րդ դասարանի դասղեկ, ես ինքս փորձեցի կոնկերտ իմ դասարանի աշակերտների ծնողների հետ ավելի սերտ կապ ստեղծել:

Նշեմ, որ տվյալ դասարանի ծնողներն ի սկզբանե դրական վերաբերմունքն են դրսևորում դպրոցի և դասարանի ներքին կանոնադրությանը և դրանով իսկ իմ աշխատանքը փոքր ինչ դյուրին դարձնում:

Բացի դասարանի դասղեկի դաստիարակչական աշխատանքներում ներառված դասղեկական ժամերի և ծնողական ժողովների, անցկացվեցին հանդիպումներ, խորհրդատվություններ և այլ միջոցառումներ՝ ծնողների հետ ավելի սերտ կապ հաստատելու նպատակով:

Կազմակերպվեցին այցելություններ դեպի թանգարան, պատկերասրահ, զվարճանքի վայրեր, որտեղ ներգրավված էին ծնողները, ինչպես կազմակերպչական հարցերում, այնպես էլ մասնակցության առումով: Այս ամենն ավելի մտերմացրեց աշակերտներին ծնողների և ուսուցչի հետ, չէ որ այս տարիքում աշակերտները փոքր ինչ ձգտում են շփվել և կիսվել հասակակիցների հետ, որոնք «կեղծ հեղինակություն» են վայելում իրենց շրջանում:

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ելնելով մեր իրականացրած ուսուցիչ-ծնող համագործակցությունից, վերանայելով արդյուքները, կատարեցինք դիտարկումներ.

- Համագործակցությունը դրական կերպով ազդեց սովորողների ուսումնառության և դաստիարակության վրա:
- Անհարժեշտ է հաճախակի իրականացնել ծնողական ժողովներ, հանդիպումներ, զրույցներ և այլն:
- Ուսումնասիրել սովորողների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վարքայն շեղումներն ու գտնել միասնական լուծման տարբերակներ:
- Անհրաժեշտ հանգամանք է մանակավարժական խորհրդատվությունը ծնողին, քանի որ ուսուցիչը կարող է կիսվել իր մասնագիտական գիտլիքներով ու փորձառությամբ:
- Գլխավոր պայմաններից է փոխադարձ հարգանքն ու գիտակցումը, որ ծնող դպորց արդյուանվետ աշխատանքի արդյուքն է դաստիարակված ու գիտակից անձնավորություն ձևավորելը:
- Մեր իսկ աշխատանքով ծնողի մոտ վստահություն առաջացնենք դպրոցի նկատմամբ:

Ամփոփելով վերը ասվածը՝ նշենք, որ ուսուցիչները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության երեխայի կյանքը լիարժեք չէ:

Մանկավարժից և դպրոցից պահանջվում է ուշադիր հետևել երեխաների տարիքային զարգացմանը և համապատասխան փոփոխություններ կատարել դաստիարակության և ուսումնառության ընթացքում:Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և դաստիարակում ապագա գիտակից անձնավորություն:

Ընտանքին էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը:

Այժմ ընտանիքի և դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դարձել: Ընտանիքը պետք է գործի դպրոցի հետ համատեղ:

Ուստի մանկավարժությունը պետք է դառնա գիտություն և ուսուցիչների, և՛ ծնողների համար, հետևաբար կարևոր և հրատապ խնդիրներից է դպրոց-ընտանիք համագործակցությունը:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սեյմոնով Վ. Դ. «Փոխազդեցություն դպրոցի և սոցիալական միջավայրի միջև»:
2. Սեմյոնով Վ. Դ. «Մանկավարժություն»
3. Ղույումչյան գիրք II «Մանկավարժություն» Երևան 2005
4. Մանուկյան Ս. «Մանկավարժագիտություն», Երևան 2002:
5. Подласый И. П. “Педагогика” 2003.
6. http://kargiskola.geoparent/pdf?PE GUIDE Armenian.pdf